

11.	ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ SOCIOLOGY AND POLITICS СОЦИОЛОГИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ НАУКИ
------------	---

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ**

Ա. Ա. ՔԱԼՇՅԱՆ

Քաղաքական գիտությունների թեկնածու

Հասարակության քաղաքական կյանքը, քաղաքական հարաբերությունների և երևույթների ամբողջությունը հանդես է գալիս որպես փոխազդեցության մեջ գտնվող այնպիսի համակարգ, որով քաղաքական ոլորտը սահմանազատվում է հասարակական կյանքի համակարգային այլ կառույցներից: Իր հարաբերական ամբողջության մեջ վերցրած՝ հասարակության քաղաքական կյանքի կառուցվածքային և գործառնական առանձնահատկություններն արդի քաղաքագիտության համակարգում բնութագրվում են «հասարակության քաղաքական համակարգ» հասկացության միջոցով:

Թեև քաղաքագիտության տեսության շրջանակներում քաղաքական համակարգի էության, կառուցվածքի, դերային և գործառնական առանձնահատկությունների մասին մոտեցումները բազմաթիվ հարցերում տարանջատվում և անգամ բևեռանում են, այդուհանդերձ, համադրական մեթոդաբանությունը թույլ է տալիս հասարակության քաղաքական համակարգը բնութագրել որպես **բաց, հարմարվողական և դինամիկ, հասարակության քաղաքական կյանքի բազմամակարդակ կառուցվածքային տարրերի, դերերի, հարաբերությունների, ինչպես նաև քաղաքական, հասարակական, իրավական, գաղափարախոսական ու մշակութային նորմերի գործառնական ամբողջություն:** Իրեն գոյավորող առանձնահատկություններով պայմանավորված՝ հասարակության քաղաքական համակարգը բնութագրում է **քաղաքական կյանքի աստիճանակարգված բաղադրատարրերի ամբողջությունը և վերջինիս բազմաստիճան կապերն ու հարաբերությունները հասարակական կյանքի կառուցվածքային ու գործառնական այլ ենթահամակարգերի հետ:** Եվ քանի որ հասարակության քաղաքական կյանքն աչքի է ընկնում կառուցվածքային բազմաշերտությամբ և գործառնական բազմադեմությամբ, ցանկացած քաղաքական համակարգի վերլուծությունն նույնպես բնութագրվում է բազմապլանայնությամբ:

Այդ ամենը, ինչպես նաև մեթոդաբանական ելակետերի տարասեռությունը իրենցով պայմանավորել են հասարակության քաղաքական համակարգի վերլուծական տարբեր մոտեցումները: Դրանց մի մասը, կարևորելով հասարակության քաղաքական համակարգի գործառնական տեսանկյունը, այն բնութագրում է իբրև շրջակա միջավայրի հետ փոխազդեցության մեջ գտնվող ինքնազարգացող և ինքնակարգավորվող համակարգային ամբողջություն (ամերիկյան դպրոց): Մյուսներն առաջնային համարելով «քաղաքականության ֆենոմենը»՝ հասարակության քաղաքական համակարգը բնութագրում են ձևական, վերացական, վարքագծային, հետվարքագծային և այլ որակների հավասարակշռված ամբողջության դիրքերից (արևմտավրոպական դպրոցներ): Երրորդները, կարևորելով ինստիտուտային բաղադրատարրերի դերը, հասարակության քաղաքական համակարգը դիտարկում են իբրև փոխադարձ կապի և հարաբերությունների մեջ գտնվող ենթահամակարգային կառուցվածքային տարրերի միասնություն կամ դիալեկտիկական ամբողջություն (ռուսական դպրոց):

Այդ ամենից դժվար չէ հանգել այն հետևության, որ հասարակության քաղաքական համակարգը քաղաքական կյանքը բնութագրող բազմաստիճան կապերի և հարաբերությունների չափազանց ընդարձակ ու բազմադեմ ոլորտ է: Այն ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ և բնութագրվում բավականին բարդ կառուցվածքային տարրերով ու գործառնական առանձնահատկություններով: Լինելով հասարակության քաղաքական կյանքի ղեկավարությունն իրականացնող ինստիտուտային, գործառնական և նորմատիվային կառույց՝ հասարակության քաղաքական համակարգի ձևավորման պայմանների և զարգացման օրինաչափությունների, ինստիտուտային կառույցների պրակտիկ գործունեության առանձնահատկությունների, քաղաքական և պետական կառույցների կենսունակության ցուցիչների քաղաքագիտական ուսումնասիրությունը տեսական և պրակտիկ մեծ նշանակություն ունի:

Պետք է նկատել նաև, որ քննարկվող հիմնահարցերի ավանդական, մոդեռն և հետմոդեռն լուծումներով քաղաքագիտության մեջ ուրույն տեղ է գրավում անգլիական (բրիտանական) դպրոցը:

Անգլիական ավանդական քաղաքագիտության ակունքներում ընկած է սոցիալ-հոգեբանության և տեսական մտքի ականավոր ներկայացուցիչ Ջ. Ուոլեսի վարքագծային մոտեցման վրա խարսխված հայեցակարգը, որը հետագա զարգացում է ապրել նրա հետնորդների՝ Ջ. Քուլի, Գ. Լասկիի, Է. Բարբերի և այլոց կողմից: Այս հոսանքի կողմից առաջադրված տեսական մոտեցումները բովանդակային հարստացում են ապրել հատկապես XX դարի երկրորդ կեսին, երբ սկիզբ դրվեց եվրոպական քաղաքագիտական մտքի զարգացման «ամերիկանացման» փուլին: Այս փուլում անգլիական դպրոցը, ամերիկյան քաղաքագիտության ազդեցությամբ՝ «ավանդական» մոտեցումներին զուգընթաց, մեծ տեղ է հատկացրել նաև քաղաքական համակարգի համակարգային ուսումնասիրությանը: «Համադրական» այդ հոսանքի առավել աչքի ընկնող ներկայացուցիչները (Դ. Բատլեր, Ա. Բերչ, Ս. Ֆայներ, Ս. Օուկշոտ և ուրիշներ) **քաղաքական երևույթների ուսումնասիրության համակարգային մոտեցումը զուգակցել են վարքագծային մոտեցման հետ**, որն իր վրա կրել է «ձևականացված ինստիտուտացման» կամ հասարակության քաղաքական համակարգի կառուցված-

քային ուսումնասիրության անուրանալի կնիքը: Այլ կերպ ասած՝ գործընթացային այդ համադրության արդյունքում ևս անգլիական քաղաքագետների աշխատություններում համակարգային մեթոդաբանությունը և «վարքագծային» մոտեցումը շարունակվել են ինքնավար կիրառվել և ինչ-որ տեղ հանդես են եկել «փոխլրացնող ամբողջության տեսքով»:

Քաղաքագիտության այս դպրոցի առանձնահատկությունները բնութագրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ այն իր համակարգում ներքնապես համադրել է ինչպես տեղական-ավանդական, այնպես էլ ամերիկյան դպրոցի հիմնարար (համակարգային, վարքագծային և այլն) հայեցակարգային սկզբունքներն ու մոտեցումները, որոնք բոլորն էլ սերտորեն շաղկապվել են արդիականության հիմնահարցերի հետ: Եվ քանի որ քաղաքական համակարգն ամենից առաջ բնութագրվում է որպես քաղաքական գործընթացների համալիր, ապա այն դրսևորվում է որպես որոշակի «քաղաքական իրավիճակի» պահպանմանը կամ փոփոխությանը միտված գործողությունների ամբողջություն: Իսկ վերջինս սերտորեն կապված է համապատասխան քաղաքական որոշումների ընդունման և պրակտիկ արմատավորման հետ: Քաղաքական համակարգը բնութագրող կառուցվածքային և գործառնական-վարքագծային այդ տեսանկյուններն էլ իրենցով պայմանավորել են այն, որ **անգլիական դպրոցին ևս հոգեհարազատ է հասարակության քաղաքական համակարգի կառուցվածքագործառնական ուսումնասիրությունը:**

Անգլիական քաղաքագիտական դպրոցի շրջանակներում ազդեցիկ դեր են կատարել նաև մեթոդաբանական այն մոտեցումները, որոնք, կոնկրետ իրավիճակով թելադրված, «քաղաքական որոշումների արմատավորման» հաճախակա-նությունը և արդյունավետությունն ուղղակի կախման մեջ են դնում ոչ թե «վարքագծային սկզբունքից», այլ ինստիտուտային կառույցներից: Մոտեցման ջատագովները համոզված պնդում են, որ **քաղաքական կյանքում ցանկացած «վարքագծային մոդել» ձևավորվում է քաղաքական ինստիտուտների կողմից**, իսկ դրանից հետևում է, որ նրանք անհատների և խմբերի քաղաքական վարքագիծը բացատրում են քաղաքական ինստիտուտների վճռական դերի և ազդեցության դիրքերից¹, և որ անգլիական դպրոցում ևս «ձևականացված քաղաքական ինստիտուտների» դերը կարևորվում է ոչ այնքան ակադեմիական նշանակությամբ, որքան սեփական քաղաքական համակարգի կայունությունը և կենսունակությունն ապահովելու, ինչպես նաև համակարգի դինամիկ գործունեության իրականացմանը նպաստելու տեսանկյունից: Այդ մոտեցմամբ անգլիական քաղաքագետները հասարակության քաղաքական համակարգը միաժամանակ դիտարկում են նաև իբրև միասնական հասարակական համակարգի հիմնատարրերից մեկը:

Այդ պնդումը կարելի է փաստել նրանով, որ ինչպես «համակարգայնականների», այնպես էլ բրիտանական քաղաքագիտության այլ (նորմատիվային, համակարգի արժեքների արդարացման, վերլուծական, էմպիրիկ²) հոսանքների և մո-

¹ Այդ մոտեցման մանրամասները տես **Ridley F.** The study of government. Political science and public administration. London, 1975, p. 43: Այդ մասին տես նաև **Hoos I.** Systems Analysis in Public Policy. A Critique. London, 1974, p. 16-17.

² Անգլիական քաղաքագիտության շրջանակներում նորմատիվային, գործող համակարգի

տեցումների ներկայացուցիչները հիմնականում զբաղվել են քաղաքագիտական այն հիմնահարցերի մշակմամբ, որոնք ունեցել են **և՛ ակադեմիական, և՛ կիրառական նշանակություն**: Խոսքը վերաբերում է հատկապես քաղաքական համակարգի հեղինակության, ազդեցության աճի, պահպանման և վերարտադրության պրակտիկ խնդիրների, իշխանության և նրա «վարքագծային» առանձնահատկությունների, հասարակության քաղաքական միավորման և միասնության ամրապնդման, քաղաքական տեսության և պրակտիկայի միասնության, դրանց հարաբերությունների և փոխազդեցության ամրապնդման, «քաղաքական սոցիալականացման» և այլ հիմնահարցերի վերլուծությանը³:

Այդ ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ տիրապետող հետվարքագծային հայեցակարգերի հիմնարար սկզբունքների զարգացումը կարևորելով հանդերձ՝ անգլիական քաղաքագիտական դպրոցի բազմաթիվ ներկայացուցիչներ (Ռ. Ռոուզ, Մ. Դևիս, Վ. Լյուիս, Դ. Վայսման և ուրիշներ), **դարաշրջանի ոգուն համապատասխան, մեծ տեղ են հատկացրել նաև քաղաքական համակարգի տեսական հիմնահարցերի, հատկապես «քաղաքական փոփոխությունների» վերլուծությանը**: Դրանից զատ, անգլիական դպրոցն ամենևին էլ չի շրջանցել այնպիսի առանցքային հիմնահարցերի համակարգային ուսումնասիրությունը, ինչպիսիք են քաղաքական համակարգի արդյունավետ գործառնությանը նպաստող «կայունությունը» և «արդյունավետությունը»: Ավելին, անգլիական քաղաքագետների տեսական որոնումներում մեծապես կարևորվել են նաև համակարգային մեթոդաբանությանը բնորոշ կառուցվածքագործառնական (Ռ. Ջոունս), ինչպես նաև համակարգի պահպանմանը միտված «քաղաքական մոբիլիզացիայի» (Դ. Նետլ) հիմնահարցերը: Այդ ամենի արդյունքում XX դարի 60-80-ական թվականներին ասպարեզ իջան քաղաքագիտության առանցքային հիմնահարցերին նվիրված բազմաթիվ աշխատություններ⁴, որոնցում փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմական, պատմասոցիոլոգիական մակարդակներով վերլուծական արժևորման են ենթարկվել պետության և քաղաքական համակարգի որակական այլ գործոնների պահպանման և արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները:

Եվ այդուհանդերձ, սխալ կլինի անգլիական քաղաքագիտական դպրոցի վրա ամերիկյան ազդեցությունը դիտարկել միագիծ տեսքով: Հայտնի է, որ դեռևս XX դարի առաջին կեսին քաղաքագիտության տեսության, ինչպես նաև քաղաքական փիլիսոփայության ոլորտներում անգլիական դպրոցում գերիշխող էին վար-

արժեքների արդարացման, վերլուծական և էմպիրիկ մոտեցումների մանրամասները տես **Nicolson P.** The Relationship between Political Theory and Political Practice / “Political Studies”, 1973, Vol. XXI, N 4; **Crick B.** Political Theory and Practice. New York, 1973; **Parry G.** Trust, Distrust and Consensus // “British Journal of Political Science”, 1976, Vol. 6, part 2 և այլն:

³ Քննարկվող համատեքստում Արևմուտքում առավել ճանաչված աշխատություններից պետք է հիշատակել հետևյալները՝ **Lively J.** Democracy. Oxford, 1975; **Smith B.** Policy – Making in British Government. London, 1975; Power and Political Theory (ed. B. Barry). London, 1976 և այլն:

⁴ Անգլիական «նոր» քաղաքագիտության ծնունդը նշանավորող աշխատությունների շարքում առաջատար նշանակություն ունեն հետևյալները՝ **Beloff M.**, **Peele G.** The government of the United Kingdom: Political authority in a changing Society. London, 1980; **Birch A.** The British System of Government. London, 1980; **Rose R.** Politics in England. An interpretation for the 1980-s. London, 1980 և այլն:

քազծային մոտեցման վրա հենված «ազգային ավանդությունները»: Եվ երբ խոսքը XX դարի երկրորդ կեսի անգլո-ամերիկյան «համադրության» մասին է, ապա դա անհրաժեշտաբար պետք է դիտարկել իր բնականոն՝ «գործընթացային ընթացքի» մեջ: Այսինքն պետք է արժևորել այն, որ այդ համադրության արդյունքում «ավանդական» մոտեցումներն աստիճանաբար լրացվելով վերլուծական լայն տեսահորիզոն ունեցող համակարգային մեթոդաբանությամբ՝ նոր և «յուրատիպ» որակներ են ձեռք բերել: Եվ որ չափազանց հետաքրքրական է, այդ «նորի» համար քաղաքական համակարգի վերլուծական ելակետ է համարվել հենց համակարգային կառուցվածքագործառնական մոտեցումը: Ընդ որում, համադրական այդ **մոտեցումների տեսական հիմքերում ընկած է եղել նաև հետպատերազմյան իրողություններով թելադրված քաղաքական պրակտիկան:** Ահա այդ համադրությամբ էլ հիմք է դրվել անգլիական «քաղաքագիտական վերածնությանը», որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «նոր» քաղաքագիտություն» անվանումը: Ավելացնենք նաև, որ այդ ամենի հիման վրա անընդունելի պետք է համարել վերլուծական գրականության մեջ շրջանառվող այն պնդումը, թե իր «... ժամանակակից տեսքով անգլիական քաղաքական գիտությունն իրենից հուժանիտար գիտելիքների նոր բնագավառ է ներկայացնում, որի ... քաղաքագիտական հետազոտություններում ընդգծվում է տնտեսագիտական, սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական ուղղվածությունը»⁵: Ինչպես արդեն նշվել է, անգլիական քաղաքագիտությանը վերագրվող «նորն» ամենևին էլ որակական երանգավորում չունի: Եվ եթե այն «նոր» է համարվում, ապա դա բացառապես պետք է հասկանալ միայն հնի և նորի օրգանական համադրության տեսքով:

Ինքնին հասկանալի պատճառով անգլիական քաղաքական գիտության ոլորտում տեղ գտած այդ փոփոխություններն իրենցով անհրաժեշտաբար պետք է պայմանավորեին նաև քաղաքական երևույթների հետազոտության նոր մոտեցումներ: **Դա, սակայն, ամենևին էլ չի նշանակում, թե իբր ավանդական մոտեցումներին «վերջ է տրվել»:** Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, այդ գործընթացում անգլիական քաղաքագիտական մտքի ներկայացուցիչների համար խորթ է եղել ցանկացած հեղափոխական մոտեցում: Այդ իսկ պատճառով էլ անհնար է չնկատել, որ այդ գործընթացում **նրանք կարողացել են ներդաշնակորեն համակցել հինը և նորը:** Արդյունքում հրապարակ են իջել նոր հայեցակարգեր, որոնց կողքին իրենց ինքնությունը պահպանել և կատարելագործման ու զարգացման ուղին են բռնել նաև քաղաքագիտության ավանդական (քաղաքական փիլիսոփայություն, քաղաքական պատմություն, հրապարակային վարչարարության) դիսցիպլինները⁶:

⁵ **Егоров С. А.** Политическая система, политическое развитие, право: критика немарксистских политологических концепций. М., 1983, с. 30.

⁶ Այդ մասին մանրամասները տե՛ս Handbook of Political Science (ed. by Greenstein F. and Polsby N.). London, p. 111: Անգլիական քաղաքագիտության շրջանակներում հնի և նորի փոխհարաբերության և ավանդական պրոբլեմատիկայի մասնագիտական վերլուծական արժևորման դերն ընդունվում է անգամ ծայրահեղ մերժողական դիրքորոշմամբ աչքի ընկնող խորհրդային քաղաքագիտական գրականության մեջ. տե՛ս, օրինակ, Современная буржуазная политическая наука: проблемы государства и демократии. М., 1982, с. 147-153:

Անգլիական «նոր» քաղաքագիտությունը կարելի է բնորոշել նաև մեկ այլ առանձնահատկությամբ: Խոսքը վերաբերում է նրան, որ քաղաքագիտության ավանդական ուղորտներին նվիրված հետազոտական աշխատանքներն ամենևին էլ չեն սահմանափակվել «ակադեմիական շրջանակներով»: Հակառակը՝ տեսության և վերլուծական ճանապարհով ձեռք բերված արդյունքներն ուղղակի ներդրվել են քաղաքական պրակտիկայում: Դա է վկայում այն փաստը, որ քաղաքագիտության արդի անգլիական դպրոցը գործնականում հանդես է գալիս **սեփական հասարակության քաղաքական պահանջունքների բավարարմանը միտված տեսական և գործնական քայլերի ներդաշնակեցման որակով**:

Այդ եզրահանգման հիմքերից մեկը կարելի է համարել «համակարգայնականների» անգլիացի ներկայացուցիչների կողմից հասարակության քաղաքական համակարգի սահմանումները: Այսպես, չմերժելով, որ քաղաքական համակարգն իրենից ներկայացնում է «օբյեկտների, քաղաքական կառույցների և հատկանիշների որոշակի ամբողջություն», Ի. Հուսը միանգամայն իրավացիորեն պնդում է, որ քաղաքական համակարգի վերլուծությունն աչքի է ընկնում բազմապլանայնությամբ: Նա համոզված է, թե դա է պատճառը, որ քաղաքական գիտության մեջ բացակայում է «քաղաքական համակարգի որևէ կայուն ու անփոփոխ սահմանում», ինչը քաղաքագետներին հարկադրում է նորանոր «մեթոդաբանական հայտնագործություններ» կատարել, որոնք «... հակասելով գիտական մեթոդի հիմնական սկզբունքներին (դոգմաներին), հաճախ ողբերգական արդյունքների են հանգեցրել»⁷: Եվ փորձելով հաղթահարել այդ «ողբերգական արդյունքները»՝ քաղաքագետը վարքագծային մոտեցման համադրությամբ քաղաքական համակարգը սահմանում է որպես «արժեքների օրգանական և գործառնական ամբողջություն»: Նա համոզված է այն բանում, որ քաղաքական համակարգն այլ բան չէ, քան «... գաղափարների, սկզբունքների, օրենքների, ուսմունքների և այլնի համալիր, որոնք իրենցով ձևավորում են մեկ ամբողջություն և լրացնում են որոշակի փիլիսոփայության, կրոնի, կառավարման ձևի բովանդակությունը»⁸:

Այս և նման մոտեցումներն ակնհայտորեն ցույց են տալիս, որ անգլիական «նոր» քաղաքագիտության շրջանակներում **ինչպես քաղաքական համակարգը, այնպես էլ վերջինիս համակարգային ենթատարրերը բնութագրվում են հասարակական կարգի պահպանման և վերարտադրման հիմնախնդիրների համատեքստում**: Ակնհայտ է, որ այդ մոտեցմամբ ինչպես ամբողջության մեջ վերցրած քաղաքական համակարգը, այնպես էլ վերջինիս համակարգային տարրերի վերլուծությունը կատարվում է բացառապես ներքին (ներհասարակական) հարաբերությունների դիրքերից: Իսկ քաղաքական համակարգի տարրերը և դրանց փոխհարաբերությունը դիտարկվում և արժևորվում են ոչ այնքան ինստիտուտային (որի դերն ամենևին չի մերժվում), որքան գործառնական և հասարակական դերի տեսանկյունից: Ավելին, որպես կանոն, **քաղաքական ենթահամակարգերը բնութագրող հասարակական դերերի ցանցը քննարկվում և արժևորվում է «նորմատիվ կարգավորման»**՝ «իրավունքների և պարտակա-

⁷ Hoos I. Systems Analysis in Public Policy. A Critique, p. 17.

⁸ Նույն տեղում, էջ 16:

նությունների», ինչպես նաև «ներկայացուցչական ակտիվության» դիրքերից: Այլ կերպ ասած՝ նշված գործընթացում նրանց համար ելակետային է այն համոզմունքը, որ քաղաքական համակարգի ցանկացած ինստիտուտ, ամեն ինչից զատ, անհրաժեշտաբար իր մեջ ներառում է նաև «նորմերի որոշակի համակարգ»⁹: Նրանք հիմնավորում են նաև այն տեսակետը, որ քաղաքական համակարգի գործառնության համար անհրաժեշտ «սահմանադրական համաձայնությունը» իրենից ներկայացնում է արձանագրված այն նորմերի ամբողջությունը, որը քաղաքական համակարգի նորմատիվ կարգավորման գործում «առօրեական նշանակություն է ձեռք բերում»¹⁰:

Ավելին, անգլիացի քաղաքագետները համոզված են, որ «քաղաքական համակարգի նորմատիվ կարգավորումը» ծառայում է հասարակական-քաղաքական ինստիտուտների, ինչպես նաև բոլոր քաղաքացիների գործառնության ներդրմանակեցման գործին: Իսկ վերջինս, դպրոցի ներկայացուցիչների համոզմամբ, իր հերթին նպաստում է հասարակական անհավասարության, ինչպես նաև «հասարակական առավելությունների կոպիտ ձևերի» հաղթահարմանը, թուլացնում է հասարակական լարվածությունը և, վերջին հաշվով, նպաստում հասարակության քաղաքական համակարգի դինամիկ գործառնության և վերարտադրության գործին¹¹:

Սակայն այդ ամենից չպետք է հապճեպ ընդհանրացում անել այն մասին, թե իբր անգլիական արդի քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչները հասարակության քաղաքական համակարգի ծագումը, դինամիկ փոփոխությունները և զարգացումը ներկայացնում են որպես «սեփական երևակայության» արդյունք, որ այն սուբյեկտիվ է և այլն: Հարցն ավելի խորքային է: **Ըստ էության այս պարագայում առնչվում ենք տեսության և պրակտիկայի սերտ հարաբերակցման անուրանալի փաստի**: Իրողությունն այն է, որ անգլիական քաղաքագետներն իրենց հետազոտությունների առանցք են դարձնում բոլոր այն հիմնահարցերը, որոնք «կատարելագործման» (չատ անգամ՝ որակական) կարիք ունեն: Դա է պատճառը, որ մի դեպքում ելակետային է համարվում տնտեսական գործունեությունը, մեկ այլ դեպքում քաղաքականությունը, երրորդում՝ նորմատիվ համակարգը և այլն: Սակայն պետք է նկատել նաև այն, որ **քաղաքական համակարգը դիտարկվում է որպես «դասակարգային տարբերությունների» նկատմամբ օտար կառույց**, որպես հասարակական-քաղաքական այնպիսի ինստիտուտների օրգանական ամբողջություն, որը հենվում է ոչ թե «ֆորմական տարբերությունների», այլ «չահերի միասնության» վրա¹²: Եվ պատճառն այստեղ

⁹ Սանրամասները տե՛ս Collet P. (ed.). Social Rules and Social Behavior. Oxford, 1977, p. 31, 39 և այլն:

¹⁰ Այդ մոտեցման մանրամասները տե՛ս Hanson A., Wallis M. Governing Britain. Glasgow, 1979, Griffith J. The Political of the Judiciary. London, 1979; Reeve A., Ware A. Interests in Political Theory // *British Journal of Political Science*, 1983, N 4.

¹¹ Այդ տեսակետների մանրամասները տե՛ս Madan G. Welfare State and Problems of Democratic Planning. Bombay, 1972, p. 27; Beloff M., Peele G. The Government of the United Kingdom: Political Authority in a Changing Society. London, 1980, p. 35-42 և այլն:

¹² Այդ մասին տե՛ս Friedmann W. The Stat and the Rule in a Mixed Economy. London, 1971, p. 7-52; Birch R. The Shanging Society. London, 1980, ch. 5-6 և այլն:

ամենևին էլ «ակադեմիական տեսության» բացակայությունը չէ: Առավել ևս այն չէ, թե իբր «անգլիական քաղաքագիտության շրջանակներում, սոցիոլոգիական և տնտեսագիտական ուղղություններում գերիշխող է դարձել քաղաքականության ուսումնասիրության էմպիրիկ մոտեցումը»¹³: Հարցն ավելի խորքային է և կապված է հետինդուստրիալ հասարակության իրողությունների, մասնավորապես քաղաքական պրակտիկայում ավելի ու ավելի ընդգծվող լեգիտիմության դերի և «գործողության տիպերի» ընկալման ոլորտում տեղ գտած որակական փոփոխությունների հետ: Անդրադառնալով այդ հարցին՝ Ա. Պանարինը պնդում է, որ այդ գործընթացների առանցքում գտնվում է «քաղաքական մարդը», որը հանդես է գալիս «որպես աշխարհի վերափոխմանը կողմնորոշված ժամանակակից տեխնոլոգիական մարդու տարատեսակ»: Այդ յուրատիպ փոխհարաբերությունն էլ իրենով պայմանավորել է բնական և հասարակական միջավայրի փոփոխություններին միտված «... տեխնոլոգիայի երկու տիպ՝ արտադրական, որն ուղղված է դեպի բնական միջավայրի վերափոխում և քաղաքական, որն ուղղված է դեպի հասարակական միջավայրի վերափոխում»¹⁴: Ընդ որում, XX դարում այդ գործընթացներն ուղեկցվել են ազդեցության «տեխնոլոգիական միջոցների» աննախադեպ ծավալմամբ, որի արդյունքում «ինդուստրիալ դարաշրջանի արդի մարդը ... հասցրել է այնքան հիմնահարցեր ծնել, որ հասկանալի չէ, թե արդյո՞ք վաղը նա գոյություն կունենա»¹⁵:

Հասարակական առաջընթացը պայմանավորող հակասական այդ միտումների հաղթահարման, հասարակական լարումը մեղմացնելու և հավասարակշռման նպատակով անգլիական տեսական միտքը հետևողականորեն խթանել է սոցիոլոգիական և սոցիալ-փիլիսոփայական գիտությունների զարգացումը, որոնց հիմնարար եզրահանգումները քաղաքագիտական մտքի ներկայացուցիչներին թույլ են տվել կատարել համապատասխան ընդհանրացումներ: Իսկ դա, իր հերթին, **էապես նպաստել է քաղաքագիտական մոտեցումների «մտահորիզոնի» որակական ընդլայնմանը**: Ահա այդ ամենի պատճառով էլ նրանց համար առաջնային և զլխավոր է համարվել մեթոդաբանական այն մոտեցումը, որ քաղաքական համակարգի առանցքը կազմող պետությունը (պետական մեքենան) հասարակական կյանքում առկա հակասությունները և շահերի անհամապատասխանությունը համահարթեցնելու համար պետք է լինի «սոցիալական և իրավական»: Պետությունը հավասարապես պետք է երաշխավորի նաև օրինականության և իրավական նորմերի հրապարակայնությունը, բոլոր քաղաքացիների համար ապահովի հավասար իրավունքներ և պատասխանատվություն,

¹³ **Егоров С. А.** Политическая система, политическое развитие, право: критика не-марксистских политологических концепций, с. 30.

¹⁴ Մանրամասները տես **Ильин В. В., Панарин А. С.** Философия политики. М., 1994, с. 204

¹⁵ **Fourastie J.** Lettre ouverte à quatre milliards d'hommes. Paris, 1970, p. 76: Ռ. Արոնի համոզմամբ ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի հետևանքներից պետք է համարել և այն, որ այդ առաջընթացը բավարար փոխհատուցում է տվել նրանց, ովքեր հասարակական-կառավարչական աստիճանակարգության մեջ ստորին տեղ են զբաղեցնում, իսկ սպառողական ստանդարտներով նրանք մոտեցել են նրանց, ովքեր իրենց փոխարեն որոշումներ են ընդունում, տես **Aron R.** Essais sur les libertes. Paris, 1965, p. 125.

անհրաժեշտ պայմաններ ստեղծի արդարության ապահովման, հասարակության տնտեսական, քաղաքական, իրավական, մշակութային և այլ ոլորտների ներդաշնակ զարգացման և մատչելիության համար: Դա է նաև պատճառը, որ անգիական դպրոցի քաղաքագետները ոչ միայն բացարձակ մերժողական մոտեցում են դրսևորում «հակասությունների վրա խարսխված պետության» մոդելի նկատմամբ¹⁶, այլև քաղաքական համակարգը բնութագրում են «դասակարգային հակամարտությունից զերծ» (ուղղված է մարքսիստական քաղաքագիտության դեմ) և «հակադրության» և «հակասության» ցանկացած այլ մոտեցումից լիովին մաքրված սահմանումներով¹⁷:

Եվ չնայած այն բանին, որ ընդդիմադիր վերլուծաբաններից շատերը հակված են XX դարի 60-80-ական թվականների անգլիական քաղաքագիտական դպրոցն ընդհանրացված ձևով որակել որպես «էմպիրիկ»՝ փաստական նյութն ապացուցում է հակառակը: Ավելին, կարելի է փաստել, որ նշված ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և տնտեսական տեղաշարժերի «կոմպլեքսային բնույթն» ինքն է «պատվիրել» այն առաջնահերթությունները, որոնց թելադրանքով մեկը մյուսի հետևից ասպարեզ են իջել Անգլիայի քաղաքական համակարգի, պետության, պետական սուվերենությանը, ժողովրդավարությանը, քաղաքական առաջնորդության, էլիտաների, քաղաքական գաղափարախոսությանը, քաղաքական կուսակցությունների տեսական և պրակտիկ գործունեությանը, պրակտիկ քաղաքական գործունեության և բանվորական շարժման քաղաքական գործընթացներն արդյունավետ կերպով ուղղորդելու, զանգվածների քաղաքական ակտիվության, քաղաքական մշակույթի, քաղաքական վարքագծի, հասարակական կարծիքի, ընտրական տեխնոլոգիաների, քվեարկության, ԶԼՄ-

¹⁶ Տե՛ս **Dyson K.** The State Tradition in Western Eorope: A Study of an Idea and Institution. Oxford, 1980, p. 283-284.

¹⁷ Բրիտանական քաղաքագետները պետությունը սահմանում են որպես «իր կառավարման ապարատն ունեցող քաղաքական կազմակերպված համակեցություն» (տե՛ս Dictionary of Political Science. London, 1965, p. 498), որպես «հասարակական ազենտ կամ այնպիսի ինստիտուտ, որն օժտված է ուժ կիրառելու համապատասխան լիազորություններով և միջոցներով», որպես «մարդկային համատեղ գործունեության միասնական կարգ» (տե՛ս Dictionary of Sociology and Related Science. London, 1968, p. 341), որպես «քաղաքական օրգանիզմի գործառնող այնպիսի կառույց, որի հիմնական նպատակը բոլոր քաղաքացիների բարիքի բարձրացումն է» (տե՛ս The Advanced Learner's Dictionary of Current English. London, 1970, p. 98):

Համակարգային վերլուծության շրջանակներում բրիտանական քաղաքագետներն առանձնացնում են նաև քաղաքական իշխանության հիմնարար այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հրապարակային իշխանությունը, պետության շրջանակներում լեգալացված ուժի կիրառումը, հասարակական կյանքի ցանկացած բնագավառում իշխանական որոշումների միակենտրոնությունն ու գերակայությունը, իշխանական բազմադեմ պաշարների լեգալ կիրառումը և այլն (տե՛ս Օքսֆորդի բառարան. քաղաքագիտություն և քաղաքականություն, Երևան, 2003, էջ 505): Նրանք հասարակության քաղաքական համակարգի առանցքը կազմող պետությունը բնութագրում են որպես «մարդկանց համատեղ գործունեության միասնական կարգ», իբրև «միավորված ընդհանրություն» (տե՛ս Dictionary of Political Science, p. 498). Երրորդներն էլ վստահաբար պնդում են, թե «պետությունը հասարակական այնպիսի ինստիտուտ («ազենտ») է, որը հասարակության վրա հարկադրական վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունի (տե՛ս Dictionary of Sociology and Related Science, p. 341).

ների, և բազմաթիվ այլ բնագավառներին նվիրված հիմնարար աշխատություններ¹⁸:

Իսկ այդ ամենը վկայում է այն մասին, որ անգլիական քաղաքագիտական դպրոցին հոգեհարազատ են տեսական մշակումները: Ավելին, կարելի է վստահաբար պնդել, որ դպրոցի քաղաքագիտական հետազոտությունները նպատակ են հետապնդում կատարելագործել սեփական քաղաքական համակարգը և բարձրացնել նրա գործառնական արդյունավետությունը: **Այդ պատճառով էլ դպրոցն ամենևին չի սահմանափակվում միայն տեսական մշակումներով, այլ «հրատեսական» վերլուծությամբ առաջադրում է քաղաքական համակարգի կատարելագործմանը, կայունության ապահովմանն ու արդյունավետության բարձրացմանը միտված պրակտիկ-գործնական երաշխավորություններ:** Դրանով քաղաքագիտական միտքը նվազագույնի է հասցնում նաև «վստահության ճգնաժամը», առանց որի կարգավորման անհնար է պատկերացնել որևէ կայուն և արդյունավետ քաղաքական համակարգ: Եվս մեկ բնորոշ առանձնահատկություն: Քաղաքական պրակտիկայի պահանջներին համապատասխան՝ անգլիական քաղաքագիտական դպրոցը սեփական քաղաքական համակարգը բնութագրող պետական կառույցների, քաղաքական ինստիտուտների և ոչ քաղաքական կազմակերպությունների ու միությունների գործառնական արդյունավետության հիմնախնդիրների լուծումը սերտորեն շաղկապում է համեմատական քաղաքագիտության հետ: Ընդ որում, համեմատական են համարվում ինչպես քաղաքական օբյեկտները (քաղաքական համակարգ, քաղաքական իշխանություն և այլն), այնպես էլ քաղաքական սուբյեկտները (քաղաքական իշխանության իրականացման ձևեր և մեթոդներ և այլն):

Ընդդիմադիր մոտեցման կողմնակիցներն անգլիական քաղաքագիտական դպրոցին մեղադրում են նաև այն բանում, որ վերջինս սահմանափակվում է ջատագովական, նկարագրական և լիբերալ մոտեցումներով: Քննադատական մոտեցում է դրսևորվում և այն բանի նկատմամբ, որ դպրոցը «հենվում է սուբյեկտիվության վրա», ինչը տեսակարար մեծ կշիռ է ստանում հատկապես քաղաքական պրոպագանդայի ոլորտում¹⁹:

¹⁸ Պետության, պետական սուվերենությանը և ժողովրդավարությանը նվիրված ուսումնասիրությունների ոլորտում մեծ ներդրում են կատարել Կ. Պոպերը, Է. Բարկերը, Բ. Կրիկը, Ի. Բերլին, Գ. Լասկին, Գ. Իոնեսկուն, Ու. Ռիզը, Մ. Օուկշոտը, Դ. Ֆիլդը և ուրիշներ: Քաղաքական գաղափարախոսության համակարգի արդյունավետության բարձրացման գործում առաջատար մշանակություն են ունեցել Մ. Ֆոգարտիի, Կ. Կոուտսի և այլոց աշխատությունները: Քաղաքական կուսակցությունների տեսական և պրակտիկ գործունեության ոլորտում իրենց ուսումնասիրություններով առանձնանում են Գ. Պելլինգը, Դ. Յենիզը, Ռ. Մակկենզին, Դ. Լոբերտսը, Դ. Լիսը, Դ. Ռոբերտսոնը և Դ. Ուիլսոնը, ճնշման խմբերի գործունեության մասին՝ Դ. Մուդին, Դ. Ստյուարտը, Է. Պոտտերը և Ս. Ֆայները, բանվորական շարժման քաղաքական գործընթացներն ուղղորդելու ուղղությամբ՝ Ռ. Մաքքենզին, Դ. Գոլդտորնը, Ա. Սիլվերը: Դ. Մուդին, Մ. Յարրիսոնը, Դ. Բատլերը, Ա. Կրուն, Ռ. Ռուզը, Դ. Բլամլերը, Ի. Բաջը, Բ. Բերրին, Ու. Գաթսմանը, Բ. Ջեսոնը և ուրիշներ արժեքավոր հետազոտություններ են կատարել նաև պրակտիկ քաղաքականության, քաղաքական մշակույթի, քաղաքական վարքագծի, զանգվածների քաղաքական ակտիվության, հասարակական կարծիքի, ընտրական տեխնոլոգիաների, քվեարկության, ՋԼՄ-ների, քաղաքական առաջնորդության, էլիտաների և բազմաթիվ այլ բնագավառներում:

¹⁹ Տե՛ս Եgorov С. А. Политическая система, политическое развитие, право: критика

Չարկ է նկատել, որ այդ պնդումները, ունենալով ռացիոնալ հատիկ, նաև ծայրահեղ են: Բանն այն է, որ ինչպես արդեն նշվել է՝ անգլիական քաղաքագիտական դպրոցի կողմից դավանվող «քաղաքական ռեալիզմը» հետապնդում է ինչպես տեսական, այնպես էլ ընդգծված գործնական նպատակներ: Ամենայն հավանականությամբ պատճառն այն է, որ «վերջին տարիներին որպես էլիտար փոքրամասնության պահանջունք Արևմուտքում ձևավորվել է ... ժողովրդավարության սնորհական տեսություն», որի հետևանքով «60-ական թվականներից Արևմուտքում պայքար է ծավալվել քաղաքական արհեստավարժների դասակարգի և քաղաքացիական նախաձեռնության շարժումների միջև»²⁰: Այդ և «հասարակական այլ բնույթի լարումը» լիցքաթափելու միտումով քաղաքագիտության անգլիական դպրոցը «ակադեմիական» ընդհանրացումների միջոցով համապատասխան գործնական «դեղատոմսեր» է առաջարկում ինչպես քաղաքական համակարգի, այնպես էլ պրակտիկ քաղաքական կյանքի առանձին ոլորտների (քաղաքական կուսակցությունների, ընտրական համակարգի, ձևական և ոչ ձևական խմբերի կողմից կառավարության և պառլամենտի վրա քաղաքական ազդեցության մեխանիզմների, ընտրազանգվածի քաղաքական վարքագծի հոգեբանության և այլն) կայունությունն ապահովելու և գործառնական արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Նպատակ հետապնդելով խթանել երկրի քաղաքական վարչակարգի և տեղական ինքնավարությունների (Շոտլանդիայի, Ուելսի, ինչպես նաև Յու. Իռլանդիայի ազգային-քաղաքական ինքնավարությունների) շահերի պաշտպանությունը և արտաբերումը՝ ինչպես նաև տեղական ինքնավարությունների կողմից առաջադրված «պահանջների բավարարման» հրամայականով՝ անգլիական քաղաքագիտական միտքը, կողմնորոշվելով դեպի նորը, արդյունավետ քայլեր է կատարում նաև «ավանդական հասարակության պահպանման» գործառնական մեխանիզմների մշակման (կուսակցական համակարգի և նրանում տեղ գտած փոփոխությունների տեսական իմաստավորում, հասարակության քաղաքական

немарксистских политологических концепций, с. 32: Դժվար չէ համոզվել այն բանում, որ այս և մնան պնդումներն իրենք են աչքի ընկնում կանխակալությամբ: Արևմտյան քաղաքագիտական միտքն իրականում հետապնդում է մեկ նպատակ՝ օտարման միտումները հաղթահարելու և ներդաշնակություն հաստատելու միջոցով պահպանել քաղաքական համակարգի status quo-ն: Դա է պատճառը, որ այս հարցում քաղաքագիտության արևմտյան գրեթե բոլոր դպրոցների մոտեցումն ընդհանրական է, այն է՝ «... ոգեշնչել և պաշտպանել այն փորձերը, որոնք պետության հանդեպ անօգնականության զգացումն ու օտարումը հաղթահարելու համար միտված են խթանել քաղաքացիների ինքնուրույն կոոպերացիան» (Sue R. Vers une societe du temps libre? Paris, 1982, p. 162): Այդ համատեքստում միանգամայն բնական պետք է համարել այն, որ Անգլիայում քաղաքագիտության ուսուցումը համարվում է դաստիարակության կարևորագույն գործոն: Անգլիան այն երկրներից է, որի կրթական համակարգի բոլոր օղակներում դասավանդվում է քաղաքագիտություն առարկան: Տրամաբանական է և այն, որ երկրի քաղաքագետների ասոցիացիայի ջանքերով հրատարակվում է «Քաղաքական իրողություններ» շարքը, որի նպատակն է օգնել դպրոցականներին և ուսանողությանը՝ հաղթահարելու «քաղաքականության նկատմամբ նկարագրական և զուտ ինստիտուտային մոտեցումները»; և նրանց օգնել՝ ըմբռնելու և «հասկանալու իրական քաղաքական գործընթացները», մանրամասները տեսնելու **Drewry G. Law, Justice and Politics (Political Realities)**. London, 1975, p. XIII.

²⁰ Տե՛ս **Панарин А. С.** Политология. М., 1999, с. 51.

ակտիվության և «կորպորատիվության» վերլուծական արժևորում, քաղաքական վարքագծի և քաղաքական մշակույթի դերի բարձրացում) և արմատավորման ուղղությամբ: **Այդ ամենն էլ թույլ է տալիս վստահաբար պնդել, որ XX դարի երկրորդ կեսի անգլիական քաղաքագիտական միտքը գործուն մեխանիզմներ է առաջադրել քաղաքական իրականության և դրա սուբյեկտիվ ընկալման համապատասխանությունը ներդաշնակորեն ապահովելու ուղղությամբ:**

Վերլուծաբաններից ոմանք համարում են, որ «անգլիական քաղաքական գիտության ռեֆորմիստական ավանդությունների համար բնորոշ է ժողովրդավարության հարցերի նկատմամբ «ընդհանուր սոցիոլոգիական» մոտեցումը, համամարդկային արժեքների և ապադասակարգային ժողովրդավարության դիրքերից բուրժուական քաղաքական համակարգի էության և հասարակական նշանակության քննարկումը, քաղաքական ժողովրդավարության տեսության հիմնական հատկանիշները և դրույթները հասարակական արդարության հայեցակարգի համապատասխան դրույթների հետ շաղկապելու ձգտումը և այլն»²¹: Այլ կերպ ասած՝ նրանում «դասակարգային-հեղափոխական» ըմբռնումները փոխարինվում են «լիբերալ աշխարհընկալմամբ»:

Սակայն, ինչպես ցույց տվեցին XX դարի վերջին քառորդի աշխարհաքաղաքական փոփոխությունները, ներկայումս համընդհանուր ճանաչման արժանացած **լիբերալ կառավարման անխուսափելի այլընտրանքը հանդիսանում է տոտալիտար կառավարումը**: Լիբերալ շարժման հիմնական սկզբունքներից մեկը «օրենքի տիրապետության» ըմբռնումն է, որը «անհատի ազատության» զուգորդությամբ տիրապետող է հանդիսանում արևմտյան աշխարհայացքում: Նրա կարգախոսներն ընդունվում են անզամ արմատական ընդդիմախոսների կողմից²²: Չպետք է աչքաթող անել և այն, որ լիբերալիզմն այլ բան չէ, քան հասարակական և քաղաքական յուրահատուկ փիլիսոփայություն, որի հիմքում ընկած է «օրենքի տիրապետության» առաջնությունը:

Այդ ամենն էլ թույլ են տալիս ընդհանրացված պնդել, որ հասարակության քաղաքական համակարգի մասին անգլիական քաղաքագիտական հայեցակարգերը, օրգանապես շաղկապելով վարքագծային և համակարգային մոտեցումները, հետապնդում են մեկ հիմնական նպատակ՝ հաղթահարել օտարման միտումները և հասարակական ներդաշնակություն հաստատելու միջոցով պահպանել քաղաքական համակարգի status quo-ն:

АНГЛИЙСКИЕ ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ КОНЦЕПЦИИ О ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЕ ОБЩЕСТВА

А. А. КАЛАШЯН

Во второй половине XXв. на основе "американизации" европейской политологии была сформирована также и английская "новая политология", в которой поведенчес-

²¹ **Марченко М. Н.** Политическая система современного буржуазного общества (политико-правовое исследование). М., 1981, с. 240.

²² **Bieri E.** Modern Liberalism: Political Thought Since World War II. Glencoe-London, 1964, p. 151.

кий (бихевиористский) подход был тесно связан с системной методологией изучения политической системы.

На основе анализа фактического материала показывается, что в трудах представителей английской "новой политологии" политическая система рассматривается как с теоретической (сущность и роль институциональных мега-, мезо- и микроструктур, функции системы, государственный суверенитет, соотношение политической реальности и ее субъективное восприятие и т.д.), так и с практической (усовершенствование демократических основ государства, политической идеологии, местного самоуправления, практической деятельности политических партий, рабочего движения, групп давления, политической культуры, поведения и т.д.) точек зрения.

Обосновывается также, что данный подход английскими политологами был выработан с целью сохранения и гармонизации status-a quo политической системы.

CONCEPTIONS OF ENGLISH POLITICAL SCIENCE ON POLITICAL SYSTEM OF SOCIETY

A. A. KALASHYAN

In the second half of XX century "a new political science of England" was founded on the basis of "Americanization" of political science in Europe which used the behavioral approach along with the systematic methodology of studying political systems.

On the basis of the analysis of factual material the author shows that the representatives of the "new political science" of England analyzed the political system from the theoretical (essence and role of institutional mega structures, mezzo structures and microstructures, system functions, State sovereignty, the relationship of political reality with its subjective comprehension, etc.) and practical (improvement of democratic institutions, political ideology, local self-government, activities of political parties, labor movement, pressure groups, political culture, behavior, etc.) viewpoint.

The article shows that the English political scientists worked out the mentioned approach for the maintenance and harmonization of status quo of political system.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ա. ՔԱՆՇՅԱՆ

Քաղաքական գիտությունների թեկնածու

«Իշխանություն» երևույթը քաղաքագիտության հիմնարար այն սկզբունքներից է, որն էապես կապված է հասարակության քաղաքական համակարգի գործառնական առանձնահատկությունների: Դա բացատրվում է նրանով, որ «իշխանություն» երևույթն իր համակարգում ներառում է բազմաբնույթ, բազմաշերտ և բազմաչափ քաղաքական և հասարակական հարաբերությունների մի ողջ գամմա: Այդ գործոններով պայմանավորված՝ իշխանությունն աչքի է ընկնում նաև ծայրաստիճան ընդարձակ գործառնական ոլորտով: Կարելի է նույնիսկ ասել, որ **այն գոյություն ունի ամենուր, որտեղ առկա են մարդկանց կայուն և ամբողջական տեսք ստացած կառույցներ** (ընտանիք, արտադրական կոլեկտիվ, հա-